ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Էդուարդ Հակոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Աստանա (Ղազախստանի Հանրապետություն) 2023 թվականի հունիսի 29-ից մինչև հուլիսի 1-ը:

4. Հրավիրող կողմը՝ Եվրասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Եվրասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) խորհրդի առկա նիստին:

6. Քննարկված թեմաները՝

1) Բանկի խորհրդի նախագահ ընտրելու մասին,
2) Բանկի տարեկան հաշվետվության, Բանկի խորհրդի 2022 թվականի նախագծային գործունեության և ֆինանսական հաշվետվության մասին,
3) Բանկում ընթացիկ գործերի առկա իրավիճակի մասին,
4) 2022 թվականի տարեկան և ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվության մասին,
5) Բանկի 2022 թվականի շահույթի բաշխման մասին,
6) Բանկի ներքին աուդիտի ծառայության աշխատակիցների լիազորությունները երկարաձգելու մասին,
7) Բանկի ներքին աուդիտի ծառայության 2022 թվականի հաշվետվության մասին,
8) Բանկում կորպորատիվ ընթացակարգերի կատարելագործման մասին,
9) Բանկի խորհրդի հաջորդ նիստի օրվա, վայրի և նախնական օրակարգի մասին:

7. Հանդիպումները, ելույթները՝

Առանձին ելույթներ նախատեսված չէին: Կայացել են առանձին հանդիպում-քննարկումներ Եվրասիական զարգացման բանկի խորհրդի անդամների հետ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորություն է ձեռք բերվել առաջիկայում շարունակել քննարկումները համագործակցության ընթացիկ ուղղություններով՝ կազմակերպելով առկա և առցանց քննարկումներ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում տեղի ունեցած շփումները Բանկի խորհրդի մյուս անդամների հետ հնարավորություն են ընձեռել ճշգրտել Բանկի ռազմավարության որոշ քանակական ցուցանիշներ, առաջարկվել է առավել մեծ ուշադրություն դարձնել Բանկի ընթացիկ ֆինանսական մոդելի վրա՝ հաշվի առնելով նաև աշխարհաքաղաքական իրավիճակի ազդեցությանը: Օրակարգ է բերվել ֆինանսավորման գործառնությունների հետագա միջնաժամկետ ռազմավարությանը: Քննարկման առարկա են դարձել Բանկի փոխառությունների կառուցվածքի փոփոխությունները, գործարքային ռիսկերը, ներդրումային և գանձապետական պորտֆելների վարկային ռիսկերը, դրանց նվազեցման ուղիները, Բանկի նորմատիվների կատարման ընթացքը, միջազգային վարկանշային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքը, նախագծերի հետ կապված գործունեությունը, միջազգային համագործակցությունը:

Գործուղվող՝

Ֆինանսների նախարարի տեղակալ
Էդուարդ Հակոբյան

Recoverable Signature

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811